ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1251-Ա « 04 » ապրիլի 2025 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ 78 ՏԵՂԱՄԱՍ ԹԻՎ 2 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ 2 ՏԵՂԱՄԱՍ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արտակ Վարդանյանի լ/ա Հարություն Խաչատրյանի դիմումը՝ Հաղթանակ 78 տեղամաս թիվ 2 և Հաղթանակ 2 տեղամաս թիվ 24 հասցեներում գտնվող /անօգտագործելի հող իրացման ենթակա/ հողամասերի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել հողի սեփականության իրավունքի 25.08.1995թ. Ա009502 պետական ակտը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ 78 տեղամաս թիվ 2 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը 4527.53քմ է՝ պետական ակտում ամրագրված 4700.0քմ-ի փոխարեն, որից 117.03քմ-ն ՀՀ կառավարության 04.02.2009թ. հ.363-Ն որոշումով սահմանված բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտու սահմաններում է, իսկ Հաղթանակ 2 տեղամաս թիվ 24 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը 4257.44քմ է՝ պետական ակտում ամրագրված 4900.0քմ-ի փոխարեն:

Քննարկվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշման հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցման սխեմայի՝ գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 12-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-133229-23 և Դ-21841-25 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Հաղթանակ 78 տեղամաս թիվ 2 և Հաղթանակ 2 տեղամաս թիվ 24 հասցեներում գտնվող, սեփականության իրավունքով Արտակ Վարդանյանին պատկանող /անօգտագործելի հող իրացման ենթակա/ համապատասխանաբար՝ 4410.50քմ և 4257.44քմ մակերեսներով հողամասերի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246